



ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐ

Կանչված լինելով արտացոլել Աստծո սրբությունը ժամանակակից ծառայության և գործունեության միջոցով, Վեսլեյան Սրբության Կոնսորցիումը (համանքը) ներկայացնում է համընդհանուր ժառանգությամբ եկեղեցիներ և առաջնորդներ, այն ժառանգությամբ, որը մեր միացյալ ձայնն է հասցնում աշխարհին: Որպես Սրբության արտահայտում մի կողմ նետելով սահմանափակումներն ու արգելքները, մենք ընդունում ենք աստվածային կոչը միասնականության վերաբերյալ և կյանքի վերականգնումը Աստծո հետ հաշտեցման միջոցով: Եվ Սուրբ Հոգին որպես պատասխան ազատություն է բերում մեկուսացվածներին, ճնշվածներին և կոտրվածներին, արդարությամբ է պատասխանում մեղքի հետևանքով առաջացած եսասիրական ազդեցությանն ու անարդարությանը, մինչև ամեն բան կվերականգնվի և կվերանորոգվի Աստծո արքայությունում: Քանզի մեզ համար կարևոր նշանակություն ունի Վեսլեյան Սրբության բնութագիրը, մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում մարդկային ժամանակակից այնպիսի աղետին, ինչպիսին է մարդկային թրաֆիքինգը և ստրկությունը, որոնք խեղաթյուրում են մարդկային ազատության այն ասպեկտը, որը Աստծո սուրբ բնույթի արտացոլանքի միջոցով մենք փնտրում ենք բոլոր մարդկանց համար: Մենք կազմել ենք այս հռչակագիրը, որպեսզի ուղղորդենք և տեղեկացված լինենք ապագայում, և կոչ անենք բոլոր մարդկանց գործելու:

- Քանզի մենք ծառայում ենք Աստծուն՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, ով հանուն սուրբ սիրո լսում և պատասխանում է չարչարվածի լացին
- Քանզի մենք նվիրված ենք մեր սրբության քրիստոնեական ժառանգությանը, որը տանջվածների ազատության պատմության մեջ անքակտելի մասնիկն է կազմում.
- Քանզի եկեղեցին կանչված է դառնալու անհատներ, որոնք տիրող ճնշվածության ու անարդարության փոխարեն կմարմնավորեն Հույսի այլընտրանքը
- Քանզի աստվածային սրբությունը, որ կա մեր մեջ, կոչ է անում մեզ պաշտպանել արդարությունն ու հույսը կյանքի բոլոր ոլորտներում
- Քանզի քրիստոնեական արդարությունը խոր նվիրվածություն է պահանջում. ինչպես անհատական, այնպես էլ համընդհանուր խոստովանություն և ներում՝ քայլեր, որոնք տանում են դեպ արդար գործողություններ
- Քանզի արդար գործելն իր մեջ ներառում է զթասրտորեն վերաբերվել մեր մերձավորներին, լսել տանջվածների լացը, բացահայտել անարդարությունն ու խոնարհաբար պայքարել անարդարություն հարուցող ուժերի դեմ
- Քանզի մենք հաստատում ենք, որ Աստծո արդարությունը փնտրելը և հաշտեցումը Աստծո սուրբ էության սիրտն է, որն արտահայտվում է մեր միջոցով.

Այս պատճառով Վեպեյան Սրբության Կոնսորցիումը կոչ է անում պատասխանել արդարության վերաբերյալ մարգարեկան պատվիրանին, որը ամբողջ սերնդին կոչ է անում արդար վարվել, կարեկից լինել և խոնարհաբար քայլել մեր Աստծո առջև, ժամանակակց ստրկության և մարդկանց վաճառքի դեմ շարժմանը միանալու ճանապարհով:

Մենք հետևում ենք մեր քրիստոնեական ժառանգությանը՝ Վեպեյան Սրբությանը, որը ներառում է.

- Աստծո կողմից Եգիպտոսում ստրկությունից մարդկանց ազատագրումը, որը սկիզբ դրեց արվիցցիոնիզմին (ստրկության դեմ շարժմանը), որը պեսք է մեր օրերում էլ շարունակվի
- Մարգարեների հատուկ մտահոգությունը այրիների, որբերի և օտարների նկատմամբ.
- Հիսուս Բրիստոսի օծումը՝ բարի լուրը աղքատներին հայտնելը, բանտարկյալներ ազատագրելը, կույրերին բժշկելը և ճնշվածներին ազատություն շնորհելը, կանանց բարձրացնելու և երեխաներին գնահատելու Նրա օրինակը
- Սուրբ Հոգին, որն ուղղորդում էր հետապնդվող առաջին եկեղեցուն միավորել ռեսուրսները հանուն համընդհանուր բարեկեցության, և որն արթնացնում է Աստծո պատկերը բոլոր մարդկանց մեջ
- Ջոն Վեպիի ծառայությունը, որը սկսվել է աղքատների շրջանում և պաշտպանում էր հոգով և ֆիզիկապես աղքատներին
- Սրբության պատմական շարժման մասնակիցներին, ովքեր վտանգի էին ենթարկում իրենց դիրքը, հեղինակությունը և կյանքը ճնշվածներին և տանջվածներին պաշտպանելու համար ստրուկների ազատագրման, կանանց և երեխաների իրավունքների, տնտեսական արդար սիստեմների, տարբեր մշակութային հարցերում եկեղեցու մասնակցության համար մղվող պատմական պայքարում.

Հիմք ունենալով այդ ժառանգությունը և սրբության կոչը մենք պնդում ենք հետևյալը.

1. **Մենք հաստատում ենք, որ ձգտումը դեպ արդարություն, հաշտեցում և ազատություն, դա Աստծո սրբության սիրտն է, որը արտացոլվում է մարդկանց մեջ:** Մենք նվիրաբերում ենք մեզ և մեր եկեղեցական ռեսուրսները ամեն տեսակի ստրկության, մարդկանց վաճառքի և ճնշման վերացման գործին, ինչպես նաև մասնակցությանը ուղղորդված գործողությունների, որոնք կարող են մարդկանց կյանքերում հույս բերել:
2. **Մենք հաստատում ենք, որ եկեղեցիները պեսք է Աստծո սուրբ սիրո խթանմանը ճիշտ արձագանքեն՝ Աստծո Արքայությանը ծառայելու և այն ավելի տեսանելի դարձնելու միջոցով:** Մենք կանչված ենք մեր մտքերում, խոսքերում և արարքներում սուրբ Աստծո հավատարիմ վկաները լինելու, այն Աստծո, ով լսում է տնտեսական և քաղաքական շահերի պատճառով, եսասեր և չար մարդկանց մեղքով տառապածների և ճնշվածների լացի ձայնը: Աստված կոչ է անում մեզ արձագանքել խոնարհ կարեկցությամբ և արդարությամբ:

3. **Մենք հաստատում ենք, որ արդար վարվել նշանակում է կարեկցությամբ հոգ տանել մեր մերձավորների մասին, բացահայտել անարդարությունը և դա հարուցող ուժերը:** Արդար արարքները և գթասրտությունը շատ հաճախ խնդիրներ են առաջացրել Աստծո մարդկանց և այս աշխարհի իշխող ուժերի միջև: Աստծո արդարության կոչը ավելին է, քան միայն հավասար վերաբերմունքը բոլորի նկատմամբ, կամ էլ համբերատարությունը մարդկանց տարբերությունների նկատմամբ: Հիսուսի օրինակով մենք կանչված ենք այնպիսի արդարության, որին հասնելու համար մենք պատրաստենք տալ ինքներս մեզ հանուն ուրիշի փրկության:
4. **Մենք պնդում ենք, որ քրիստոնեական արդարությունը խոր նվիրվածություն է պահանջում. ինչպես անհատական, այնպես էլ համընդհանուր խոստովանություն և ներում:** Մենք ընդունում և ցավում ենք պատմության ընթացքում անարդարությանը եկեղեցու հանցակցության համար: Մենք ընդունում և ցավում ենք անարդարությանը եկեղեցու հանցակցության համար, որը մենք շարունակում ենք մինչ այսօր: Մենք ընդունում և ցավում ենք մեր մեղքերի համար, երբ մենք քրիստոնյաների պես չենք պատասխանում մեր շուրջը տիրող անարդարություններին: Մենք ընդունում և ցավում ենք այն բանի համար, որ շատ հաճախ մենք այն անարդարության մի մասն ենք կազմում, որի դեմ եկեղեցին ձգտում է պայքարել:
5. **Մենք հաստատում ենք, որ պարտավոր ենք պաշտպանել արդար գործունեությունը կյանքի բոլոր ասպարեզներում:** Մենք արտացոլում ենք Հիսուսի կարեկցական հույսը և սերը բոլոր մարդկանց համար տարբեր պայմաններում: Մենք կխոսենք նրանց փոխարեն, ում չեն լսում, կլինենք ճնշվածների կողքին՝ առաջարկելով օգնություն, որը նրանց կրեթի փրկություն, վերականգնում, բժշկում և ազատություն:
6. **Մենք հաստատում ենք, որ մենք կանչված ենք լինել մարդիկ, ովքեր մարմնավորում են հույսը ճնշվածների և անարդարությունից տանջվողների համար:** Մենք կանչված ենք արտացոլելու սուրբ Աստծուն սուրբ կյանքի մեջ, մարմնավորելով արդարությունը մեր շարժառիթների և գործողությունների մեջ հանուն մարդկանց, իրավիճակների, կառույցների և ժողովուրդների: Եվ չնայած մենք Հիսուսի գոհի պես չենք կարողանա կանգնեցնել բոլոր տառապանքները, մենք կանչված ենք բերել Աստծո բժշկող սրբությունը արաչագործության փրկության և վերականգնման համար:
7. **Մենք պնդում ենք, որ մենք պետք է միասնաբար խորհենք, ամբողջապես ջանք գործադրենք և ներգրավված լինենք ինչպես տեղական մակարդակով, այնպես էլ միջազգային:** Մի շարք բարդ խնդիրներ հարուցում են ժամանակակից ստրկությունը, այդ իսկ պատճառով պետք է որոշակի քայլեր ձեռնարկել: Այն հարցը, թե ովքեր ենք մենք քրիստոնեական համայնքում կօգնի լուծել այդ խնդիրները և անցնել գործողությունների:

Այդ պատճառով մենք խոստանում ենք.

1. Միասնաբար և առանձին-առանձին, ինչպես կազմակերպություն և ինչպես անհատներ, մեր Վեպլեյան Սրբության դոկտրինային հետևելով, կարեկցաբար ծառայել և մարգարեաբար մարտահրավեր նետել բռնապետական սիստեմներին
2. Օգնել, խրախուսել, ռեսուրսներով օժանդակել, պլանավորել և միասնաբար մասնակցել էֆֆեկտիվ, իմաստուն և մշտական գործողություններին
3. Ջանք գործադրել որպես երկրպագող համայնք, որի հիմքում Քրիստոսն է, և որը լցված է Հոգու ուժով
4. Մտածել խորը, աղոթել հույսով և գործել անվախ:

Դրա համար ապրում ենք և ծառայում, մինչև Քո թագավորությունը կլինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է:

Դեկտեմբեր 2013